

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/5

15 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հենրիկ Վարոսյանի 18.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.08.2015 թ-ի թիվ 6113990 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Հենրիկ Վարոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը հայտնում է, որ որպես անհատ ձեռներեց գործունեությունը սկսել է 1999թ. հունիս ամսից, գրանցվելով Շենգավիթի ՀՏ-ում՝ ըստ բնակության վայրի: Որոշ ժամանակ անց անկախ իր կամքի տեղափոխվել է Մյասնիկյանի այժմյան Կենտրոնի ՀՏ, քանի որ այդ ժամանակ գործող օրենքի համաձայն անհրաժեշտ էր գրանցվել այն համայնքի ՀՏ-ում, որտեղ փաստացի իրականացվում էր գործունեությունը: 2013թ-ին վարձակալման տարածքի օտարման պատճառով ԱՁ-ն լուծարվել է: 2015թ-ին վարձակալության պայմանագրով վարձակալել է տարածք Երևան քաղաքի Կոմիտաս 60/2 հասցեում, որի հետևանքով վերականգնել է ԱՁ-ն:

31.07.2015թ.-ին իր աշխատանքային գործունեությունն իրականացնելու ընթացքում ներս է մտել մի երիտասարդ, որը ներկայացրել է արծաթյա շղթա և խաչ: Երկուսն էլ անհրաժեշտություն կար վերանորոգելու: Երիտասարդը հարցրել է, թե կարող վերանորոգել շղթան և խաչը: Քանի որ աշխատանքը բարդ էր /խաչի վրա առկա էին քարեր, որոնք բարդացնում էին վերանորոգման աշխատանքները/ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանն այդ պահին չի կողմնորոշվել, թե կվերանորոգվի այն, թե ոչ: Այդ իսկ պատճառով նա հաճախորդին առաջարկել է դրանք թողնել իր մոտ: Հաճախորդը հարցրել է, թե որքան կարժենա վերանորոգումը, եթե այն հաջողվի կատարել: Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը պատասխանել է, որ այն կարժենա մոտավորապես 2.000 դրամ:

Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը նշում է, որ հաճախորդից գումար չի պահանջել, քանի որ դեռ պարզ չէր, թե կվերանորոգվի այն, թե ոչ: Հաճախորդը հայտնել է, որ պետք է ընտանիքի անդամների հետ խորհրդակցի, որպեսզի պարզի զարդերը թողնի, թե ոչ: Նա դուրս է եկել զանգահարելու: Այդ նույն ժամանակ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանին զանգահարել են: Երբ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը խոսելիս է եղել հեռախոսով, հաճախորդը մտել է ներս, գումարն առանց իր համաձայնության դրել սեղանին և արագ դուրս է եկել, ասելով, որ երկուշաբթի օրը կգա զարդերի հետևից: Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը դեռ շարունակում էր խոսել հեռախոսով, երբ նրա հետևից ներս է մտել մեկ ուրիշ անձնավորություն: Գումարը և խաչը դեռ դրված էին սեղանին: Ներս մտած անձնավորությունը ներկայացել է որպես հարկային տեսչության աշխատակից և հայտարարել է, որ վերցված գումարի դիմաց ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը նրան բացատրել է, որ հաճախորդից գումար չի պահանջել: Բացի այդ, հաճախորդին բացատրել է, որ հնարավոր է զարդը հնարավոր չլինի վերանորոգել, դրա համար էլ գումար չի պահանջել: Սակայն, հաճախորդը միտումնավոր կերպով գումարը թողել է սեղանին և հեռացել է:

Ըստ գանգատի, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը դեռ չգիտեր կարող է արդյոք վերանորոգել զարդը, թե ոչ: Այդ պատճառով նա հաճախորդից գումար չի պահանջել, և առհասարակ, հաճախորդներից նախօրոք գումար չի վերցնում: Քանի որ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը դեռ խոսում էր հեռախոսով, չի կարողացել ուշադրության կենտրոնում պահել հաճախորդի կողմից գումարը սեղանին դնելու հանգամանքը:

Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը խնդրում է վերացնել 150.000 դրամի տուգանքը, քանի որ այն անհիմն է և ընդամենը երկու ամիս աշխատելով ի վիճակի չէ վճարել նման տուգանք: Գանգատարերը խնդրում է նաև իրեն տեղափոխել կամ Շենգավիթի կամ Արաբկիրի ՀՏ, եթե ոչ, ապա իրեն մնում է միայն լուծարվել, քանի որ Կենտրոնի ՀՏ-ի հետ համագործակցել այլևս չի կարող:

### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 22.07.2015 թ-ի թիվ 6113990 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հենրիկ Վարոսյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.08.2015 թ-ի թիվ 6113990 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանի կողմից 31.07.2015թ-ին ժամը 14:58-ին ք.Երևան, Կոմիտաս 60/2 1-ին հարկ, 2/3 տաղ. հասցեում գտնվող արհեստանոցում կատարվել է արծաթյա վզնոցի վերանորոգում 2000 դրամ արժեքով, որի դիմաց կանխավճարը կատարվել է կանխիկ դրամով: Հենրիկ Վարոսյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը ծանոթացման: Այնուհետև ժամը 14:59-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2000 դրամը, ժամը 13:00-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 13:01-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 2000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Նիստի ընթացքում Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը նշեց, որ Ակտում հիշատակված զարդի վերանորոգման պատվերը վերցնելիս դեռ չգիտեր, թե կարող է արդյոք այն վերանորոգել, թե ոչ: Այդ իսկ պատճառով նա հաճախորդից գումար չի պահանջել: Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը նշեց նաև, որ այն պահին, երբ հաճախորդը սեղանին է դրել

գումարը և արագ հեռացել է, նա խոսել է հեռախոսով և չի կարողացել ուշադրության կենտրոնում պահել հաճախորդի կողմից գումարը հանձնելու պահը:

Հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանը նշեց, որ իրոք Ա/Ձ Հենրիկ Վարոսյանը տեղեկացրել է, որ անհրաժեշտ է զարդը թողնել իր մոտ՝ դրա վերանորոգման աշխատանքները կատարելու համար: Արմեն Մելիք-Ստեփանյանը նշեց նաև, որ Ա/Ձ Հենրիկ Վարոսյանին ուղղված հարցին, թե որքան պետք է վճարի կատարվելիք աշխատանքի համար, վերջինս պատասխանել է, որ աշխատանքի գումարը կկազմի 2000 դրամ: Հարկային տեսուչի Ա/Ձ Հենրիկ Վարոսյանին ուղղված հաջորդ հարցին, թե 2000 դրամը վճարի նախապես, թե զարդը վերցնելու օրը, հնչել է պատասխան, որ վճարումը կարող է կատարվել և տվյալ պահին և զարդը վերցնելու օրը՝ ըստ հաճախորդի ցանկության: Արդյունքում Հարկային տեսուչ Արմեն Մելիք-Ստեփանյանը նշված 2000 դրամը Ա/Ձ Հենրիկ Վարոսյանին է վճարել տեղում և հայտնելով, որ կվերադառնա երկուշաբթի օրը, հեռացել է: Այնուհետև ներս են մտել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 22.07.2015 թ-ի թիվ 6113990 հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք և արձանագրել են Ա/Ձ Հենրիկ Վարոսյանին կանխիկ վճարված գումարը վերջինիս կողմից ՀԴՄ չմուտքագրելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Հենրիկ Վարոսյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համաձայն ՀԴՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարը (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել կտրոն:

Արդյունքում, վերոգրյալ խախտման համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված միջնորդությանը՝ կապված Ա/Ձ Հենրիկ Վարոսյանի հաշվառման վայրը Շենգավիթի կամ Արաբկիրի ՀՏ տեղափոխելու հետ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովը նման լիազորությամբ օժտված չէ:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.08.2015 թ-ի թիվ 6113990 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ